M.K. AGHAYAN

KEYNSIAN MODELS OF ECONOMIC GROWTH

The analysis of Keynesian models of economic growth shows that economic development implies profound structural changes in key sectors of the economy. Without the use of advanced technologies, the possibility of quality economic growth is simply ruled out. This means that in current conditions, economic growth can not take place without technological modernization. Consequently, scientific and technological developments are the main source of quantitative and qualitative improvement of economic growth.

Keywords: economic growth, economic development, institutional change, developing countries, technological modernization, the vicious circle of poverty, productive investment, average national income per capita, “big push” theory.

ՀՏԴ 329 (479.25)

Ա.Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ ԱՐՄԵՆԱԿԱՆ, ՀՆՉԱԿՅԱՆ ԵՎ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Անդրադարձ է կատարվել 19-րդ դարի վերջին Արևմտյան Հայաստանում ստեղծված տագնապալի իրավիճակին: Հայկական ազգային քաղաքական կուսակցությունները ձգտում էին ժողովրդին պատրաստել ինքնապաշտպանության: Վան-Վասպուրականում գործող Արմենական, Հնչակյան, Դաշնակցական կուսակցությունները արտասահմանից զենք-զինամթերք էին տեղափոխում և զինում հայդուկներին: Վանի հերոսական ինքնապաշտպանությունը տեղի ունեցավ 1896 թ. հունիսին: Վերոնշյալ քաղաքական կուսակցությունների առաջնորդներ Մկրտիչ Ավետիսյանը (Արմենական), Մարտիկը/Մարտիրոս Սարուխանյանը (Հնչակյան) և Պետոն/Ալեքսանդր Պետրոսյանը (Դաշնակցություն) հանդես եկան միասնականորեն՝ քաջաբար առաջնորդելով ազգային ընդվզումը:

Առանցքային բառեր. Վան-Վասպուրական, ազգային կուսակցություններ, զենքի և զինամթերքի փոխադրում, ինքնապաշտպանական մարտեր, միասնական դիրքորոշում:

19-րդ դարի 90-ական թվականներին Էրգրումում գործող քաղաքական ուժերի գործունեությանը բնորոշ երևույթ էր զինակիր խմբերի կազմակերպումը և դրսից զենքի ու զինամթերքի պաշարների փոխադրությունը: Երկրի ներսում զենք դժվարությամբ էր ճարվում, քանի որ «... հոն ներքի շուկայ չէր ստեղծուած եւ յոյս ալ չկայ, որ ստեղծուի» [1]:

Իսկ առանց զենքի անկարելի էին հայոց կուսակցությունների գոյությունն իսկ և ազգապաշտպան ծրագրերի իրականացումը: Այդ էր պատճառը, որ և՛ արմենականները, և՛ հնչյանները, և՛ դաշնակցականները հետամուտ եղան զենքի փոխադրության գործը կազմակերպելուն:

Դաշնակցականները զենքերը փոխադրում էին ոչ միայն Պարսկաստանից, այլև Ռուսաստանից, որոնք «այնքան սուղի կը նստին իրենց փոխադրական ծախքերով», ուստի և աննպատակահարմար[1]: Հետզհետև Սալմաստում և Թավրիզում բացվում են զինագործական արհեստանոցներ «... շինելու համար զէնքերու փայտէ կոթերը եւ երկաթային այն մասերը, որ հնարավոր է» [1]: Զենքի փոխադրության գործը, ճանապարհների ծայր աստիճան վտանգավոր, անապահով ու դժվարանցանելի լինելու պատճառով, մեծ բարդությունների հետ էր կապված: Գործում էին զինատար մի քանի երթուղիներ: Պարսկաստանից զենքի փոխադրումը Սալմաստ-Վան ճանապարհով շուրջ 160 կիլոմետր է, իսկ Խոյ-Թադևոս Առաքյալի վանք-Վան՝ 200 կմ: Առավել կարճը Դերիկ-Վան ուղեգիծն է՝ շուրջ 100 կմ: Արմենականներն ու դաշնակցականները, թիկունք ընտրելով Սալմաստն ու Խոյը, որպես կենտրոնավայր ընտրում են Դերիկի հինավուրց վանքը: Դերիկ-Վան ճանապարհը կիսով չափ կրճատում էր ճանապարհը Էրգրի հետ:

Այդ վանքում տարիներ առաջ պաշտոնավարել էին Հովհաննես Բազունի և Վան վասպուրականցիների շրջանում մեծ հարգանք վայելող Արսեն Թոխմախյան վարդապետները, որոնք, սակայն, չդիմանալով շրջակա քրդական ցեղախմբերի ճնշումներին, թողել-հեռացել էին: Վանքը դարձել էր ապաստարան մազրիկցի, շամսկցի, ալանդցի, ավտոցի քրդական կռվասեր ցեղերի համար: Վանքին անմիջապես կից կար փոքրիկ քրդական գյուղ, իսկ մի պարսիկ «բանջարանոց մը պատրաստած էր... վանքը ամբարի մը վերածած էր եւ տիրացած անոր» [2]:

Արմենական կենտրոնական մարմինը, Դերիկի վերաբերյալ որոշում կայացնելուց հետո, կտրիճների մի խումբ է ուղարկում, որը գրավում է վանքը, ուսումնասիրում շրջակայքը և ամուր հիմնավորվում:

Արմենական փորձառու մարտիկներ Արմենակ Եկարյանի, Մովսեսի (Միքայել Իշխանյան), Ֆարհատի (Գրիգոր Արարքցյան) հետ այստեղ են գալիս կտրիճներ Զաթոն ու Շերոն, ինչպես նաև մի խումբ դաշնակցական գործիչներ, որոնց թվում՝ Վարդանը, Սևքարեցի Սաքոն, Նիկոլ Դումանը: Շրջակա քրդական ցեղերը մի քանի անգամ փորձում են գրավել ու ավերել Դերիկի վանքը, բայց ապարդյուն: Այն դառնում է հուսալի ապաստարան, մի մշտական գործող կայան արմենական ու դաշնակցական զինակիր խմբերի համար [3]:

Դաշնակցականներն ամրացնում են վանքի պարիսպները: Արմենականները կարողանում են Թավրիզի թեմի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոս Մխիթարյանի միջոցով պաշտոնապես վավերացնել վանքի հանդեպ իրենց ունեցած իրավունքները: Հետզհետև Դերիկ-Վան ուղեգիծը դարձավ «կյանքի ճանապարհ» հայ հեղափոխականների համար: Առանց չափազանցության՝ դա այդպես է,

քանզի առանց երկիր զենք ներմուծելու՝ հեղափոխական-ազատագրական խմբերի և կուսակցությունների համար անկարելի կլիներ որևէ լուրջ գործողության ձեռնարկումը և հայության անվտանգության ապահովումը: Սակայն շուտով Դերիկի սահմանային հատվածում կատարվող աշխույժ եռուզեռն ու բավական ակտիվ անցուդարձը իր վրա գամեց թուրքական իշխանություններին և «... անոր Սալմաստի ու Թաւրիզի հիւպատաներուն եռանդուն աշխատակցութեամբը, համիտիէ ալայներու ուշադրութիւնն ալ լարուեցաւ հայերուս եւ մասնաւորաբար տէրիկցիներու վրայ» [2]:

Քրդական ցեղախմբերի շարունակական հարձակումների և ճանապարհային կարևոր ուղիներում հակառակորդի կողմից սարքված դավադրությունների արդյունքում Դերիկը կորցնում է իր ունեցած նախկին ազդեցությունը և նշանակությունը:

Քրդական խաժամուժի հետ զինատար խմբերի ունեցած ընդհարումների ժամանակ արմենականներից և դաշնակցականներից զոհվում են լավ պատրաստված, ընտիր ռազմինկներ, որոնց վերաբերյալ այնքան առասպելական պատմություններ էին պատմում քրդերն իրենց առօրյա զրույցներում:

Անհրաժեշտ է նշել, որ զինակիր խմբերի կազմակերպման և զենքի փոխադրության գործին լուրջ ուշադրություն էին դարձնում թե՛ արմենականների, թե՛ հնչակյանների, թե՛դաշնակցականների վարչական մարմինները: Վերջիններս նախապես աշխատանքներ էին կատարել և իրենց տրամադրության ներքո ունեին ճանապարհների յուրաքանչյուր ծակուծուկը լավ սերտած և բոլոր նրբություններին մանրազնին տիրապետող ուղեցույցներ (վալատներ) և բազմաթիվ զինակիր խմբեր «... Անոնց կը պարտին իրենց կյանքը» [4]:

Առավելագույնս օգտագործվում էր ամեն ինչ՝ զենքի փոխադրության գործի անխափան կազմակերպման համար: Ճանապարհների հարմար կետերում ստեղծվում են փոքրիկ կայաններ՝ մանրածախ խանութների քողի ներքո:

Արմենական, հնչակյան և դաշնակցական կուսակցությունների միջև սերտ փոխհամագործակցություն ձևավորվեց հատկապես 1895-1896 թվականներին:

1895 թվականի աշնանը տագնապալից վիճակ ստեղծվեց Վանում: Բոլորն էլ զգում էին, որ թուրքական իշխանությունները պատրաստվում են հայ բնակչության հետ հաշվեհարդար տեսնել: Ինքնապաշտպանության գործի պատասխանատուները ևս տենդագին ջանքեր էին թափում՝ դիմակայելու վերահաս աղետին: Վանի հայության տարբեր խավերի շրջանում հանգանակություն է կատարվում, որպեսզի զենքի ու զինամթերքի նոր պաշարներ հասցվեն Վան:

1895 թ. ուշ աշնանը Լևոն Զրվանդյանի և Տիգրան Տերոյանի (Վազգեն) երկու խմբերը ուղևորվում են Պարսկաստան՝ զենք գնելու և փոխադրելու «... իրենց խումբերէն գոյացած դրամովը»: Զինատար խմբերը հաջողությամբ տեղ

են հասնում, իսկ վերադարձին նրանց միանում են տեղի ընկերներից շատերը, որոնք չէին ցանկանում «... հեռուէն հանդիսատես ըլլալ իրենց հայրենիքի փչացման» [2]:

Արմենականներին դեպի Վան առաջնորդում են Գր. Պեոզիկյանը և Ուստա Փանոսը: Այս խմբի կազմում էին «մեր լաւ կռուող ընկերներէն Քանքանեան Օհաննէսը, Ուզուն Օհաննէսը, Սէթ և հաւթվանցի Աւետիսը և Արմենական կամաւորներ՝ Աւետիքը, Զաքարը և Մարտիրոսը: Այս խումբին կը միանան դաշնակցական Նիկոլը և Յարութիւնը և Պօղազ Քէսէն գիւղի մեր տղաներէն Թովմասը, Մարտիրոսը, Վարդանը և Սարգիսը՝ իբրև առաջնորդ» [4]: Խումբը, ըստ Արմ. Եկարյանի, բաղկացած էր 35 մարտիկներից, որը 1895 թ. նոյեմբերի 25-ին անցնում է պարսկա-թուրքական սահմանը:

Ըստ Հ.Յ.Դ. գործիչ Սարգիս Մեհրապյանի (Խանասորա Վարդան) «խումբը, բաղկացած էր 60 հոգուց, բոլորսն էլ զինված մոսին հրացաններով՝ դիմում է Վան» [5]:

Ի դեպ, այս նույն իրադարձության, ինչպես նաև այլ դեպքերի վերաբերյալ արմենական ու դաշնակցական գործիչների երկերում բազմաթիվ փաստեր որոշակիորեն հակասական են, նաև իրարամերժ:

Սահմանն անցնելուց հետո, Սարայի մոտ սկսվում է ձյունախառն ուժգին մրրիկ, որից զինակիր խմբի անդամներից ոմանք կորցնում են ճամփան: Սաստիկ ցրտից որոշ հայդուկների ձեռքերն ու ոտքերը սառչում են: Վազգենը, կորցնելով հետնապահ մասին և շարժվելով առաջ, մտնում է մի գոմի մեջ: Քրդերը նկատում են խմբին և աղմուկ-աղաղակով շրջապատում: Սկսվում է անհավասար կռիվը: Հայ մարտիկները տալիս են մի քանի զոհ: Գիշերվա մթությունից օգտվելով՝ խմբի անդամները շարժվում են առաջ և հասնում Բողազ-Քեսան, որտեղ նորից շրջապատվում են քրդական հրոսակների կողմից: Վերջիններս չոր խոտի խրձեր են վառում այն գոմի դռան առջև, ուր պատսպարված էին հայորդիները: Չկամենալով ողջ-ողջ խեղդվել, հայ մարտիկները դիմում են հանդուգն քայլի. «Փամփուշտները դնում են հրացանների մեջ և հանկարծ, իրար հետևից դուրս են թռչում գոմից՝ անընդհատ կրակ թափելով աջ ու ձախ» [5]: Քրդերը շփոթության են մատնվում և սկսում դեսուդեն փախչել՝ տալով տասնյակ զոհեր: Հայ մարտիկներին հաջողվում է այդ կռվում գրավել վեց հրացան և ութ ձի: Բողազ-Քեսենի կռվին մասնակցած և անօրինակ խիզախություն դրսևորած դաշնակցական գործիչ Նիկոլ Տեր-Հովհաննիսյանը ստացավ «Դուման» մականունը:

Վան վերադարձին վեճ է ծագում բերված զենքերի պատկանելության շուրջ: Հ.Յ.Դ. ականատես գործիչը նշում է, որ Սարայի կռվի ժամանակ արմենականների հրացանների զգալի մասը խափանվել էր: Նրանք «առել էին մեր տղաների զենքերը և կռվել թշնամու դեմ: Եվ այդ զենքերով էլ հասան Վան» [5]:

Զինակիր խմբերի գործունեության ընթացքում ամրապնդվում է հայ քաղաքական ուժերի միջև եղած համագործակցությունն, առհասարակ, և ռազմական զինակցությունը, մասնավորապես: Զենքի հայթայթման աշխատանքներում ապահովելով մեկը մյուսի անվտանգությունը, տարբեր քաղաքական ուժերի հովանու ներքո գտնվող հայդուկները ձևավորում էին մեկ-միասնական բռունցքի փոխակերպվելու հոգեբանությունը: Շուտով՝ 1896 թ. հունիսյան ինքնապաշտպանական մարտերում, վերոհիշյալ համագործակցությունը տվեց իր արդյունքները:

1896 թ. գարնան ընթացքում իրավիճակն ու լարվածությունը հետզհետև սրվում էր Վան-Վասպուրականում: Թուրքական իշխանությունները անում էին ամեն ինչ, որպեսզի Վանի հայ ազգաբնակչությունը ևս ենթարկվեր ջարդ ու կոտորածի:

Այդ ծանր, տագնապալից պահին Վանում գործող հայկական երեք քաղաքական ուժերի՝ արմենականների, հնչակյանների և դաշնակցականների պատասխանատուները ցուցաբերում են վերին աստիճանի գիտակցված համերաշխություն ու բարոյական բարձր որակներ՝ ապահովելու տեղի հայության անվտանգությունը:

Ականատեսների վկայությամբ՝ արմենականների առաջնորդ Մկրտիչ Ավետիսյանը, հնչակյան պատասխանատու Մարտիկը (Մարտիրոս Սարուխանյան) և դաշնակցականների պարագլուխ Պետոն (Ալեքսանդր Պետրոսյան) «գերագույն ճիգերու կը դիմեն ժողովրդին ինքնապաշտպանության համար» [6]:

Նույն հեղինակի վկայությամբ, դաշնակցականներն ու հնչակյանները «Կովկասի մէջ կրնային դրամ և զէնք ձեռք բերել, բայց կարելին ըրած էին արդէն: Իսկ արմենականներու յոյսը դուրսէն աւելի Երկրին մէջ ապրող ժողովրդին ինքնօգնութեան վրայ էր» [6]: Զենքի փոխադրության և դրանց պատկանելության շուրջ հետաքրքիր է սույն դիտարկումը. «Արմենականներու զէնքերը մեծամասնութեամբ անհատական սեփականութիւն էին, մնացածները՝ խմբական: Դաշնակցականներու զէնքերն ընդհանրապէս կուսակցական սեփականութիւն էին: Թէ՛ այդ զենքերը և թէ՛ անոնց տրամադրուած գումարը հայթայթուած էր ընդհանրապէս Կովկասէն, նոյնը պէտք է ըսել նաեւ հնչակեաններու ունեցածի մասին: Իսկ Արմենականներու զէնքերու մէկ մասը հայթայթուած էր Վաէն» [6]:

1896 թ. հունիսի հենց սկզբին սկսվեց Վանի հերոսական ինքնապաշտպանությունը: Այդ ժամանակ արդեն Վանում էր գտնվում սուլթանական բարձրաստիճան պաշտոնյան՝ Սաաէդդին փաշան, որն ուղարկվել էր «Բարեկարգիչ Յանձնաժողովի Բարձր Քոմիսէրութեան» կողմէ՝ իբր «քննիչ»» [6]: Իրականում վերջինիս Բ. Դռան կողմից հանձնարարվել էր կազմակերպելու Վանի հայության ջարդը: Հունիսի 3-ից Սաաէդդին փաշան գործի դրեց ջարդի պլանավորված սցենարը:

Թուրք և քուրդ խուժանը կատաղի գրոհի անցավ բոլոր ուղղություններով: Հայերը կորուստներ ունեցան հարձակման առաջին օրվա ընթացքում: Առաջին օրվա խուճապից հետո հայկական ինքնապաշտպանական ուժերը վերադասավորվեցին նախապես պատրաստված մարտական դիրքերում: Իսկ կռիվները սկսվելուց մի քանի օր առաջ Մ. Ավետիսյանը հրավիրում է կուսակցական առաջնորդների խորհրդակցական ժողով: Այն տեղի է ունենում արմենական Լևոն Խանիկյանի բնակարանում: Իր բնույթով նման ժողով առաջին անգամ էր գումարվում Վանում: Ժողովի օրակարգի առանցքը կազմում էր մոտեցող արհավիրքին դիմագրավելու հարցը:

Մ. Ավետիսյանը իր խոսքում խորապես հիմնավորում է հայոց կուսակցությունների փոխադարձ համերաշխության և համագործակցության անհրաժեշտությունը, գտնելով որ «թշնամին ահաւոր ոյժ ունի եւ իր հետեւից կայսրութիւն մը, ուստի մեզ կը մնայ շարժիլ խիստ զգուշաւոր, խոհեմ եւ գաղտնի կերպով, եթէ կուզենք յաղթանակ ապահովել եւ կոտրել գերութեան դաժան շղթան» [7]:

Նա մասնավորապես առաջարկում է վերջ տալ ցույցերին և ցուցամոլական գործունեությանը, քանի որ ցույցերը «կսպառեն մեր ուժերը, ժողովուրդի մէջ յոռետեսութիւն կը յառաջացնեն» [7]: Բնորոշ է, որ հնչակյանների պարագլուխ Մարտիկ Սարուխանյանը, հետևելով իր կուսակցության որդեգրած դիրքորոշմանը, ի պատասխան հայտարարում է. «Ոչ, մենք ցոյց ենք անում, որ Եւրոպան դղրդի» [7]:

Բարեբախտաբար, վտանգի թեժ պահին Վանում գործող քաղաքական ուժերի առաջնորդները գործեցին միակամ ու ընդգծված համերաշխության մթնոլորտում:

Պաշտպանողական դիմադրության նախագիծը նախապես գծագրված և պատրաստված էր:

Արմենական պարագլուխ Մ. Ավետիսյանը, հնչակյան և դաշնակցական պետերի՝ Մարտիկի և Պետոյի հետ համախորհուրդ, 1896 թ. հունիսի 4-ին դիմում է վերոնշյալ նախագծի գործադրության: Նախապես ցուցակագրված հինգ հարյուրից ավելի հայ ռազմիկներ տեղավորվում են «պատնեշներու» կամ «դիրքերու վերածված երկյարկանի տուներու վերինյարկերուն մէջ, որոնք շինուած էին հայ եւ թրքաբնակ թաղերու սահմանակից՝ զուտ հայաբնակ փողոցներու վրայ» [6]:

Իսկ քաղաքում կառուցվել էին շուրջ երեսուներեք այդպիսի դիրք-պատնեշներ:

Ահավոր ու հերոսական էր Վանի դյուցազնամարտը: Հայոց մի բուռ քաջեր, իրենց պատիվը, ինչքն ու կյանքը պաշտպանելու բնականոն մղումներից դրդված, ելած էին ճակատելու անհամեմատ գերակշիռ և պետության կողմից կազմակերպ-

ված ուժերի դեմ: Հայկական թաղամասերը վերածվել էին ինքնապաշտպանական ճամբարների՝ շնորհիվ հայ քաղաքական ուժերի համերաշխության և կազմակերպվածության: Պաշտպանվելու համար օգտագործվում էր ամեն ինչ. բնական ամրությունները, բակերն ու պարտեզները, առանձնատները: Խուժանի և քրդական հեծելազորի առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով որոշ տեղերում կտրել էին հսկա ուռենիները, փողոցներում ստեղծելով բարիկադանման ամրություններ, թաղամիջյան ճանապարհները ողողել ջրերով [8]:

Վանի ինքնապաշտպանությունը տևում է 1896 թ. հունիսի 3-ից մինչև 8-ը: Հայ քաղաքական ուժերի կողմից դիմադրությունը կազմակերպված էր մարտավարական լավագույն սկզբունքներով, իհարկե, ելնելով ստեղծված իրավիճակից և ունեցած հնարավորություններից: Ընդ որում, ինքնապաշտպանության ընթացքում հայերի ունեցած կորուստները այնքան մեծ չէին, որքան որ մեծ էին անպաշտպան բնակչության տված կորուստները: Հայ մարտիկների դիմադրությունը բավական հաջող էր և կարող էր երկար շարունակվել, որը խիստ անհանգստացնում է թուրքական իշխանություններին և Վանի անգլիական հյուպատոս Ուլյամսին: Նրանք մտավախություն ունեին, որ Վանի հայության դիմադրական կռիվները, շարունակվելու դեպքում, առիթ կտան սահմանակից Ռուսաստանին՝ ռազմական միջամտություն կատարելու: Այդ պատճառով էլ և՛ թուրքական իշխանությունները, և՛ եվրոպական հյուպատոսները փորձում են որևէ ձևով վերջ տալ հայերի դիմադրությանը:

Արյունարբու Սաաէդդին փաշան, կանխազգալով, որ ռազմական միջոցներով դժվար է ընկճել հայոց դիմադրությունը, եվրոպական հյուպատոսների միջոցով ակնարկում է սկսել բանակցություններ՝ զենքը վայր դնելու և ինքնապաշտպանության ղեկավարների Պարսկաստան անցնելու վերաբերյալ: Հունիսի 6-ին Ուլյամսը հյուպատոսների անունից պահանջում է ինքնապաշտպանության փաստացի ղեկավար Մ. Ավետիսյանից անձնատուր լինել այն նախապայմանով, որ հայոց կողմի ունեցած զենքերը հանձնվեն թուրքական իշխանություններին, իսկ ապստամբների պարագլուխները տարվեն որևէ եվրոպական նավահանգիստ: Խմբապետական խորհրդակցությունից հետո ռազմական մարմինը մերժում է այս առաջարկը: Հայերը, չվստահելով Ուլյամսի կեղծամիտ մտադրություններին, առաջարկում են բանակցություններին մասնակից դարձնել Վանի նաև ռուսական, ֆրանսիական ու պարսկական հյուպատոսներին:

Միաժամանակ կռիվը նորից սաստկանում է: Հունիսի 7-ին հայ մարտիկներին հաջողվում է փախուստի մատնել թուրք զինվորներին և գրավել երկու թնդանոթ:

Տարբեր կուսակցությունների, խմբերի ու խմբակների պատկանող հայ երիտասարդները, ցուցաբերելով զարմանալի համերաշխություն և միակամություն, օր ու գիշեր հսկում էին դիրքերը, ետ մղելով զորքի և խուժանի նորանոր

հարձակումները: Հայ ինքնապաշտպանները «... կը կռուէին երգելով «կռուեցէք տղերք»-ը՝ շատ տեղ մասնակցութեամբ հեղինակին» [9]:

Իսկ հեղինակը Միհրդատ Եսայանն էր, «... ճշմարիտ Եզոպոս մը, որուն չափ գիտէր մագնիսացնել իր խօսակիցները.

Կռուեցէք տղէրք, կռուեցէք քաջ-քաջ,
Անվեհեր կանգնած թշնամուն առաջ,
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից ոսոխին ահը» [9]:

Այս քայլերգը հորինված էր դեռևս 1895 թ. աշնանը՝ Բողազ-Քեսանի մոտ տեղի ունեցած մարտնչումների առիթով: Թուրքական իշխանությունների համար դժվար էր ընկճել հայ պաշտպանների անօրինակ ոգեշնչումով ծնված հերոսական ոգին: Ուստի սկսվում են դիվանագիտական խարդավանքները, 1896 թ. հունիսի 8-ին անգլիական հյուպատոսը, կռիվը վերջացնելու պատրվակի ներքո, նոր ժողով է գումարում, որին ներկա են լինում Վանի հոգևոր առաջնորդ Սահակ վարդապետ Բագրևանդյանը, Վանի Նազըմ փաշան, պարսկական հյուպատոս Միրզա Հուսեին խանը, ռուսաց կողմից՝ Կ. Չիլինկիրյանը, ինքնապաշտպանության ղեկավար Մ. Ավետիսյանը՝ քառասուն փորձառու և զինյալ հայդուկների հետ: Այդ ժողովում հնչած մեղադրանքներին ի պատասխան՝ Ավետիսյանը ևս մեկ անգամ հայտարարում և հիմնավորում է, որ իրենց մղած կռիվը ինքնապաշտպանական բնույթի և նշանակության է. «Թող կառավարութիւնը դադարեցնէ անզէն ժողովրդի կոտորածը, թող արգելէ ալան-թալանը... Եւ թող հոս նստած յարգելի հիւպատոսներ իրենց ստորագրությամբ երաշխաւորէն թէ կառավարութիւնը պիտի գործադրէ մեր խնդիրքը, այն ժամանակ մենք քաղաքէն դուրս կելլենք» [10]:

Վերջապես համաձայնություն է ձեռք բերվում: Հայ մարտիկները պիտի թողնեին Վանը այն պայմանով, որ ճանապարհին չպիտի հետապնդվեին թուրքական և քրդական ուժերի կողմից: Վանի ինքնապաշտպանական մարմնի որոշման համաձայն՝ կռվող երիտասարդությանը զենքը ձեռքին պետք է հասցնեին Պարսկաստան: Դա պայմանավորված էր նրանով, որ հայկական ջոկատների զինամթերքը սպառվելու էր շուտով, իսկ թուրքական թնդանոթների ուղիղ նշանառության հարվածները մեծ ավերածություններ էին գործում և զոհերի տեղիք տալիս: 1896 թ. հունիսի 8-ի երեկոյան, ինքնապաշտպանական մարմնի հրամանի համաձայն, զինյալ խմբերը, թողնելով իրենց դիրքերը, շարժվում են դեպի Վարագա վանքը:

Վարագայի մատույցներում հավաքվում են շուրջ 1000 զինյալ և անզեն երիտասարդներ: Այստեղ միջկուսակցական ժողովից հետո որոշվում է, որ բոլորը միասին մի ուղղությամբ են առաջ շարժվելու: Հնչակյան զինվորները Մարտիկի

առաջնորդությամբ առաջապահներ են ընտրվում, դաշնակցականները Պետոյի գլխավորությամբ «... բոլորի թիկունքից գնալու, իսկ արմենական զինվածները՝ Ավետիսյանի և Մուշեղի գլխավորությամբ անզեններին երկու կողմից պաշտպանելու» [11]: Վարագը դեռևս շեն էր: Պատարագ է մատուցվում: Ապա յուրաքանչյուր մարտիկ վերցնում է ճանապարհի համար անհրաժեշտ հաց ու մթերքներ»:

Այնուամենայնիվ, նահանջի հարցում տարաձայնություններ են առաջանում, և արմենականների խումբը, պաշտպանական անհրաժեշտ մարտակարգ ընդունելով, անմիջապես բռնում է նահանջի ճամփան: Իսկ Պետոյի և Մարտիկի առաջնորդությամբ դաշնակցական և հնչակյան խմբերը Վարագա լեռան մոտ պատսպարվելուց մի քանի օր անց՝ նույնպես բռնում են նահանջի ճանապարհը՝ Աբաղայի դաշտով:

Սակայն երկու խմբերն էլ նահանջի հենց սկզբից հետապնդվեցին թուրքական կանոնավոր զինուժի և քրդական մեծաթիվ ուժերի կողմից: Թուրքական իշխանությունները մանրակրկիտ նախապատրաստել էին նահանջող ջոկատների հետապնդումն ու ոչնչացումը: Գործնականում իրենց հավաստիացումներին տեր չկանգնեցին նաև եվրոպական հյուպատոսները, որոնք երաշխավորել էին ինքնապաշտպան մարտիկների անվտանգ անցումը Պարսկաստան:

Եզրակացություն. 1896 թ. Վանի հունիսյան հերոսական ինքնապաշտպանությունը հայ սերունդներին և հայոց պատմությանն ավանդեց իր դասերն ու պատգամները, իր ուսանելի խորհուրդը: Այն թշնամուն ցույց տվեց հայության դիմադրական ուժն ու կորովը:

Ինքնապաշտպանական մարտերի հետևանքով թուրքերին չհաջողվեց Վան քաղաքի հայության հանդեպ սարքել այնպիսի կոտորած, թալան ու ավերում, ինչպիսին նրանք իրագործեցին շրջակա գավառների և ինքնապաշտպանության միջոցներից զուրկ այլ վայրերի նկատմամբ: Ինքնապաշտպանական կռիվներում առավելագույնս իրար օժանդակեցին և կողք կողքի կռվեցին արմենականները, հնչակյաններն ու դաշնակցականները:

Դա ևս մեկ անգամ վկայեց, որ հայոց ուժերի՝ մեկ-միասնական բռունցքի փոխարկվելու դեպքում թշնամու համար գրեթե անհնարին է դառնում հայաջինջ պլանների իրագործումը:

Վանի քաջակորով ինքնապաշտպանները ապացուցեցին, որ հայոց միասնության մեջ է հայ ժողովրդի լինելիության և հարատևման գրավականը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Թեհրան, 1982, էջ 24:
2. Յուշեր Արմենակ Եկարեանի (այնուհետև՝ Եկարեան Ա.), Գահիրէ, 1947, էջ 23, 44, 69:

3. **Գևորգյան Հ.,** Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012, էջ 28-34:
4. **Նաթանեան Մ.,** Արմենական կուսակցութիւնը, Գահիրէ, 1990, էջ 28:
5. Խանասորա Վարդանի հիշատակարանը, Երևան, 1992, էջ 93, 95, 96:
6. **Դարբինյան Ա**., Հայ ազատագրական շարժման օրերէն, Ե., 2003, էջ 51, 57, 71:
7. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 427, ց. 1, գ. 30, էջ 7:
8. **Աճառյան Հր.,** Տաճկահայոց հարցի պատմությունը, Նոր նախիջևան, 1915, էջ 40:
9. **Երամեան Հ**., Յուշարձան Վան*-Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1950, հատ. Ա, էջ 360, 361:
10. **Տէր-Մկրտչեան Ե**., Գանձեր Վասպուրականի, Պոսթոն, 1966, էջ 459:
11. ԳԱԹ, Շահեն Կուժիկյանի ֆոնդ, 580 թ., 3բ, նո. 31, էջ 444:

А.О. КАРАПЕТЯН

ОЧЕРКИ О ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЕНАКАНОВ, ГНЧАКЯНОВ И ДАШНАКЦАКАНОВ В ВАНЕ- ВАСПУРАКАНЕ

В конце 19-го века в Западной Армении сложилась тревожная ситуация.

Армянские национальные партии старались подготовить народ к самообороне. Действующие в Ване-Васпуракане партийные структуры арменакан, гнчакян и дашнакцакан привозили из-за границы оружие и боеприпасы и вооружали гайдуков. В июне 1896г. произошла героическая самооборона Вана. Лидеры вышеуказанных партийных структур – Мкртич Аветисян (арменакан), Мартик (Мартирос Саруханян) (гнчакян) и Пето (Александр Петросян) (дашнакцакан) - стали действовать единодушно и дружно, отважно руководя народным восстанием.

Ключевые слова: Ван-Васпуракан, национальные политические партии, перевозка оружия и боеприпасов, сражения в целях самообороны, единая позиция.

A.H. KARAPETYAN

EXTRACTS FROM THE OPERATIONS OF ARMENAKAN, HNCHAKYAN AND DASHNAKTSAKAN POLITICAL PARTIES IN VAN-VASPOURAKAN

At the end of the 19th century an alarming situation was created in Western Armenia. Armenian national political parties sought to prepare the people for the self-defense. The Armenakan, Hnchakyan and Dashnaktsakan parties, operating in Van-Vaspourakan, transportated weapons and ammunition from abroad and armed the hayduks. The heroic self-defense of Van took place in June 1896. The leaders of above-mentioned political parties Mkrtich Avetisyan (Armenakan), Martik/Martiros Sarukhanyan/ (Hnchakyan) and Peto/Aleksader Petrosyan/ (Dashnaktsakan) acted united bravely leading the national revolt.

Keywords: Van-Vaspourakan, national political parties, the transportation of weapons and ammunition, self-defense battles, united solidary actions.